ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1957 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հ. Սարգսյան

# 1907 Թ. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

*1907 թ. հունվարին Եգիպտոսում տեղի ունեցան մի շարք դեպքեր, որոնք անմիջականորեն կապված էին 1905 թ. ռուսական առաջին ռևոլյուցիայի հետ։*

*1907 թ. հունվարի 18-ին Ալեքսանդրիայի ոստիկանությունը (անգլիական իշխանությունները) ռուսական հյուպատոսարանի պահանջով ձերբակալում է այստեղ ապաստանած երեք ռուսահպատակների, «որոնք հյուպատոսարանին պիտի հանձնուին Ռուսիա խրկվելու համար»[1]։*

*Ովքեր էին այս երեք ռուսահպատակ ապաստանյալները և ինչու էին նրանց ձերբակալել։ Ժամանակի եգիպտահայ պարբերական մամուլում հրապարակված հաղորդումները սպառիչ պատասխան չեն տալիս այս հարցերին։ Սակայն մանրամասն հետևելով նույն այդ հաղորդումներին և հաշվի առնելով Եգիպտոսում տեղի ունեցած ցույցերը, ի պաշտպանություն ձերբակալվածների, մենք որոշակի եզրակացության ենք գալիս։ Եգիպտահայ մամուլը ձերբակալվածների կենսագրության և նրանց գործունեության վերաբերյալ ոչ մի տվյալ չի տալիս. միայն «Աղատ բեմ» թերթում կարդում ենք, որ «Երեք ռուս փախստականները քանի մը ամիսներե ի վեր Աղեքսանդրիա հաստատուած էին»[2]։ Ենթադրություններ կան, որ Ալեքսանդրիայում ձերբակալված այս երեք ռուսահպատակները թերևս ապստամբած «Պոտյոմկին» զրահանավի նավաստիներից լինեն[3]։*

*Հայ մամուլի տվյալները, որոնք ձերբակալվածներին որակավորում են «քաղաքական փախստականներ», «քաղաքական ապաստանյալներ», «երեք ռուս հեղափոխականներ» խոսքերով, անկասկած, հիմնավորված են և համոզում են, որ նրանք Ռուսաստանում մասնակցել են 1905—1907 թթ. ռևոլյուցիոն շարժումներին։*

*Ռուս ռևոլյուցիոներ-էմիգրանտների ձերբակալման լուրը անօրինակ հուզումներ և համակրանքի մեծ ցույցեր առաջացրեց Ալեքսանդրիայում։ Առաջադեմ թերթերը բողոքով լի նյութեր են հրապարակում քաղաքական փախստականների նկատմամբ ցուցաբերված այս արարքի դեմ։*

---

[1] «Էլուսարեր», 24 հունվարի, 1907։

[2] «Աղատ բեմ», 23 հունվարի, 1907։

[3] *В. Б. Лункий.* „Подъем нац. освободительного движения в арабских странах в период первой русской революции 1905—1907 гг.“ См. Первая русская революция и международное революционное движение, ч. II, Москва, 1956, стр. 430.

*Ձերբակալվածների պոտյոմկինցիներ լինելու հնարավոր ենթադրությունը ստուգելու համար մենք դիմեցինք «Պոտյոմկինի հերոսները» գրքի հեղինակ և Հյուսիսային Նավատորմի թանգարանի աշխատակից դոկտոր Գոնոմարյովին։ Պատասխան նամակում նա հայտնում է, որ ոչ մի տվյալ չունի այդ հարցի մասին և իր մոտ կա միայն «Պոտյոմկին»-ի անձնակազմի ցուցակը։*

Մեծ թվով ցուցարարներ բարձրանում են Ալեքսանդրիայի նավահանգիստում կանգնած ռուսական շոգենավը և ցույց կազմակերպում այնտեղ[1]։

Հունվարի 20-ին, կիրակի օրը տարբեր ազգությունների ներկայացուցիչներից կազմված ավելի քան երեք հազար ցուցարարների թափորը միտինգի է հավաքվում Ալեքսանդրիայի բորսայի դահլիճը. ժողովում ընդունված բանաձևում պահանջվում է ազատ արձակել ռուս քաղաքական ապաստանյալներին և չհանձնել նրանց ռուսական հյուպատոսությանը՝ Ռուսաստան ուղարկելու համար։

Ժողովից հետո ցուցարարները շրջում են Ալեքսանդրիայի գլխավոր փողոցներով «ազատություն» կոչելով։ Այնուհետև թափորը կանգ է առնում ռուսական Հյուպատոսարանի առաջ. «ցուցարարները հավկիթ և ցեխ նետեցին Հյուպատոսարանի դինանշանի վրա և ցարական դերբը վայր իջեցրին»[2]։

Ռուս ռևոլյուցիոներ-էմիգրանտների ձերբակալման և Ալեքսանդրիայում տեղի ունեցած բողոքի ցույցերի լուրը արագ կերպով տարածվում է Կահիրեում։ Այստեղ ևս տարբեր ազգությունների պատկանող հազարավոր մարդիկ բողոքի ցույցերի են դուրս գալիս ի պաշտպանություն ռուս մարդկանց։ «Երկուշաբթի, կեսօրին Կահիրեի մեջ ալ սկսան ցույցեր տեղի ունենալ ձերբակալյալ երեք հեղափոխականներու ի պաշտպանություն,— գրում է «Ազատ բեմ» թերթը,— ամեն մարդ կպոռար, ազատություն, ազատություն, անկցի ցարը, անկցի բռնապետությունը...։ Հազարավոր ցուցարարների մեջ, նախ կորսուած էր ազգության դաղափարը և միջազգային եղբայրակցության դդացում մըն էր, որ զանոնք քով քովի բերած ռուս հեղափոխականներու ի նպաստ ձայն բարձրացնել կուտար»[3]։

Կահիրեի ցուցարարները միտինգի են հավաքվում խեդիվական բորսայի շենքի առաջ. ելույթ ունեցողները պահանջում են, որպեսզի ձերբակալվածները ազատ արձակվեն։ Այստեղից ցուցարարների թափորը շարժվում է դեպի ռուսական Հյուպատոսարանը։ Նախքան ցուցարարների Հյուպատոսարան հասնելը, այնտեղ է կանչվում ջրհանկիրների մի խումբ, որը անգլիացի ոստիկանապետ Մենսֆիլդ փաշայի հրամանով սկսում է ջրել ամբոխը։ Դա վրդովեցնում է ցուցարարներին, նրանք գրավում են ջրատար խողովակները։ Ամենուրեք լսվում են «ազատություն», «ազատություն» կանչերը։

Հուզումները չեն դադարում Կահիրեում։ Ռուսական Հյուպատոսարանի շենքի առաջ 1907 թ. հունվարի 21-ին տեղի ունեցած ցույցից երկու օր հետո, հունվարի 23-ին երեկոյան մի մեծ բազմություն նորից միտինգի է հավաքվում Կահիրեի «Նուվոթեի» թատրոնի դահլիճում. բոլոր ելույթ ունեցողները, հատկապես իտալացի փաստաբան Կուարնոթթոն և եգիպտացի ճարտարապետ Բաթիթին իրենց ելույթներում կոչ են անում ժողովականներին շարունակելու բողոքի ցույցերը ռուս ռևոլյուցիոներներին ազատ արձակելու համար։ «Նուվոթեի»-ում կայացած միտինգի մասնակիցները դատապարտում են նաև «Տիրամիտ» օրաթերթը և հերքում են նրա այն պնդումները, թե իբր ձերբակալ-

[1] Շոգենավի անձնակազմը ոչ մի դիմադրություն ցույց չի տվել, սպաներից մեկը ռուսերեն լեզվով ցուցարարներին հանդստության է հրավիրում, իսկ նավապետը անմիջապես մեկնել է ռուսական հյուպատոսությանը տեղի ունեցած դեպքերի մասին իրազեկ դարձնելու։

[2] «Ազատ բեմ». 23 հունվարի, 1907։

Նույն տեղում, 2 փետրվարի, 1907։

ված ռուսները ոչ թե քաղաքական, այլ պարզապես օրինազանց հանցավորներ են, որոնք՝ «Բիրամիտ»-ի ասելով, Ալեքսանդրիայի «Նավատորմի ռուսական ընկերություն»-ից նամակով հինգ հազար ռուբլի են պահանջել, մերժումի դեպքում սպառնալով Ալեքսանդրիայի նավահանգստում գտնվող այդ ընկերության շոգենավերից մեկը պայթեցնել։ Անգլիասեր այս թերթի միտումնավոր, շինծու հարցադրումը նպատակ է ունեցել վարկաբեկել ռուս ռևոլյուցիոներներին, տապալել նրանց պաշտպանության օգտին կազմակերպված ցույցերը։

Լորդ Կրոմերը՝ Եգիպտոսի անգլիական լիիշխան սատրապը, որը իր գործունեության քսանհինգ տարիների ընթացքում ամրացնում էր անգլիական կապիտալի դիկտատուրան Եգիպտոսում և եգիպտական ժողովրդի արյունը ծծում, այն Կրոմերը, որը 1906 թ. հունիսի 13-ին Դենշավա գյուղում հակաանգլիական ելույթներին մասնակցած ֆելլահների հետ վայրենի հաշվեհարպար էր տեսել, չէր կարող համաձայնվել ցույցերի մասնակիցների հետ։

Ահա թե ինչու Լորդ Կրոմերը պատրվակ դտնելով հանրահայտ կապիտուլյացիոն ռեժիմը[1], իր հրամանն է տալիս ձերբակալված ռուսահպատակներին հանձնելու ցարական հյուպատոսությանը։

Պետք է շեշտել նաև Ալեքսանդրիայի և Կահիրեի ցույցերի ինտերնացիոնալ բնույթը։

Թե ռուսական պրոլետարիատի հանդեպ եղած համակրանքը և թե համերաշխության ինտերնացիոնալ զգացումները եգիպտական առաջադեմ մարդկանց ոտքի հանեցին ընդդեմ ցարական բռնապետության, ընդդեմ անգլիական գաղութային կամայականությունների։ Հիշված ցույցերին մասնակցել են Եգիպտոսում ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչները՝ իտալացիներ, հույներ, արաբներ, ֆրանսիացիներ, հայեր, բրիտանացիներ և այլն։ Ցուցարարները ոչ միայն պաշտպանել են ռևոլյուցիոներներին, այլև հանդես են եկել Եգիպտոսում անգլիական իշխանությունների կամայականությունների դեմ՝ հանուն Եգիպտոսի ազատագրման։ Ալեքսանդրիայի և Կահիրեի տարբեր ազգերի հազարավոր ներկայացուցիչների առաջին և համատեղ ելույթները ի պաշտպանություն ռուս ռևոլյուցիոներների ակնառու կերպով ցույց տվեցին, թե ինչպես աճում էին դեմոկրատական ուժերը Եգիպտոսում։

Մեզ հայտնի չէ, թե ովքեր են եղել այս անօրինակ ցույցերի կազմակերպիչները և ցույցերին մասնակցողների սոցիալական կազմը, մի բան միայն պարզ կերպով ընդգծվում է, որ 1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի արձագանքները տարածվել են նաև Եգիպտական ժողովրդի և տեղական ինտելիգենցիայի լայն խավերի մեջ։ Չնայած որ այդ շարժումները կարճատև են եղել, այնուամենայնիվ նրանք քաղաքական խոշոր նշանակություն են ունեցել եգիպտական ժողովրդի ազգային ազատագրական պայքարի համար։

Ռուս ռևոլյուցիոներներին ցարական հյուպատոսությանը հանձնելու Անգլիական իշխանությունների որոշումից հետո, ոստիկանական խիստ միջոցա-

[1] 18-րդ դարում կապիտալիստական պետությունների կողմից բռնի կերպով Արևելքի գաղութային ժողովուրդների վրին փաթաթված այս ռեժիմի շնորհիվ եվրոպական հյուպատոսները իրավասություն են ձեռք բերել տեղական իշխանությունից պահանջել, որպեսզի նա ձերբակալի հյուպատոսի մատնանշած և իր երկրին հպատակ մարդուն ու հանձնի իրեն։ Բացի այդ, այս ռեժիմի շնորհիվ օտարերկրացիները դատական, առևտրի և այլ ասպարեզներում որոշ արտոնություններ էին վայելում։

ումներ են կիրառվում հնարավոր խռովությունների առաջն առնելու համար։ Ոստիկանական պահպանություն է սահմանվում Ալեքսանդրիայի ու Կահիրեի ռուսական հյուպատոսության շենքերի վրա։ Խիստ հսկողության տակ էին պահվում նաև ձերբակալված այդ երեք ռուսահպատակները, որպեսզի նրանց Եգիպտոսից հեռացվելու օրը գաղտնի պահվի և նոր հուզումների ու ցույցերի առիթ չստեղծվի։ «Այդ դժբախտները Հատրայի բանտեն ճիշտ այն պահուն հանեցին,— գրում է «Վուսաբեր»-ը,— երբ Աղեքսանդրիայեն մեկնած Բորսայիի կառախումբը հոնկե պիտի անցներ. ոստիկաններու և հնձելաղորդի ջոկատները բանտին դռներուն առջև կը գտնվեին... ամեն միջոց ձեռք առնված էր, որպեսզի առանց տեսնվելու նավ նստեին։ Խռովութեններեն վախ ունենալով բարձրաձիով խանութներ գոցվեր էին»[1]։

Ռուսական հյուպատոսի պահանջով հատուկ շոգենավակով բանտարկյալները գիշերվա ժամը 4-ին փոխադրվում են «Կոռնիլով» ռուսական շոգենավը, որը և նույն օրը առավոտյան ժամը 6-ին ուղևորվում է դեպի Օդեսա։

Կահիրեի ու Ալեքսանդրիայի ցույցերը դադարելուց և ձերբակալվածներին Ռուսաստան ուղարկելուց հետո այդ ցույցերի ակտիվ մասնակիցները դատական պատասխանատվության են ենթարկվում։ Տեղական և օտար դատարանները պատասխանատվության են կանչում Կարապետյան Օսկար անունով մի հայի և «La Reforme» թերթի ֆրանսիացի խմբագիր Պանիվենին։ Անգլիական հյուպատոսության դատարանը երկու ամիս բանտարկության է դատապարտել Ֆոլե անունով մի անգլիական հպատակի, որը ցույցի օրը հարվածել է ոստիկանության երկու պաշտոնյաների[2]։

Քաղաքական ակտիվության վերելքի պայմաններում մեծ կամպանիա է սկսվում ռուս ռևոլյուցիոներների ընտանիքներին նյութական աջակցություն ցույց տալու համար։ «Երեք ռուսներու ընտանյաց ի նպաստ տեղական «L'Egypte» թերթը կոչ մը ուղղած է, և հանգանակություն ձևնարկած է. մինչև քանի մը օր առաջ 100 ոսկի հավաքված է արդեն»[3]։

Հիշատակության արժանի է Եգիպտոսի պրոգրեսիվ մամուլի վերաբերմունքը այդ դեպքերի նկատմամբ։ «Աղեքսանդրիոն մեջ եղած ցույցերը ապշեցուցիչ են»,— գրել է «L'orient» թերթը։ Մի ուրիշ թերթ «Journal du Caire»-ը գրել է. «Կարելի չէ ուրանալ կատարված ցույցերուն բարոյական բարձր արժեքը։ Անոնք, որ ռուս քաղաքական բանտարկյալներու դատը ձեռք առին արտի և միանգամայն կարգապահության տեր մարդիկ են»[4]։

Դեպի ռուսական ռևոլյուցիան եղած համակրանքը իր արտահայտությունը գտավ նաև Եգիպտոսի պրոգրեսիվ հայ մամուլի էջերում, որը աղատագրական գաղափարների պատվաստման ու տարածման գործում Միջին ու Մերձավոր Արևելքի ժողովուրդների մեջ զգալի դեր կատարեց։ «Ռուս հեղափոխական շարժումը օրինակ մըն է, նաև ազատագրության ձգտող ամեն ազգերուն, օրինակ մը գործնականության, որմե պիտի կրնան սորվել ստրուկ ժողովուրդները»[5]։

---

[1] «Վուսաբեր», 31 հունվարի, 1907։
[2] Նույն աեղում, 7 փետրվարի, 1907։
[3] «Ազատ բեմ», 9 փետրվարի, 1907։
[4] Մեջբերումներ արված են «Ազատ բեմ» թերթից, 16 հունվարի, 1907։
[5] «Ազատ բեմ», 16 հունվարի, 1907։

Այս տողերը ցույց են տալիս, թե 1905—1907 թթ. ռուսական ռևոլյուցիայի օրինակը կարևոր ազդակներից մեկն է հանդիսացել ճնշված ժողովուրդների ազատագրության համար։ Եգիպտական «Ալ-Մինբար», «Ալ-Լիվան» և հայկական «Ակատ բեմ», «Լուսաբեր» լրագրերը 1906—1907 թթ. ընթացքում իրենց էջերում հաճախ լուսաբանել են Ռուսաստանում տեղի ունեցող ռևոլյուցիոն շարժումները և անհրաժեշտ եզրակացություն արել նրանցից ստար և հայ ժողովուրդների Թուրքական և հատկապես եգիպտական ժողովրդի անգլիական՝ իմպերիալիզմի լծից ազատվելու համար։ Հետագայում ռուսական շարժումների անմիջական ազդեցության տակ արաբների ազգային-ազատագրական շարժումներն ավելի ուժեղացան սուլթանական տիրապետության դեմ և ընդգրկեցին ամբողջ Արաբական թերակղզին։